## ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆ – ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍՈՒՄ Է ՔԵԶԱՆԻՑ

**Խոր փոխհարաբերությունների գաղտնիքները - Մաս 1**

*«Թող սերը առանց կեղծիքի լինի.»*
Հռոմեացիներին 12:9ա

### Ի՞նչն է ստիպում մեզ՝ դիմակներ կրել
### Վախը

*«...վախեցա... թաքնվեցի:»* Ծննդոց 3:10

**1- Բացահայտման վախը ետ է պահում մեզ անկեղծ լինելուց**

*«Մարդկանցից ո՞վ գիտի մարդկային ներքնաշխարհը, եթե ոչ մարդու մեջ գտնվող հոգին:»*
Ա Կորնթացիներին 2:11ա

*«Բոցավառ շրթունքներն ու չար սիրտը արծաթի խարամով պատած խեցեղենի պես են:»* Առակներ 26:23

### Անկեղծության առաջին բանալին - Աստծո լույսի մեջ քայլել

*«Եթե լույսի մեջ ենք քայլում, ինչպես որ նա է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք միմյանց հետ.»*
Ա Հովհաննես 1:7

*«Քննության ենթարկված ամեն ծածուկ բան հայտնի է դառնում.»* Եփեսացիներին 5:13

*«Մերժում ենք քողարկված ամոթալի գործերը, խորամանկությամբ չենք ընթանում ...այլ ճշմարտությունը հայտնելով՝ ինքներս մեզ ներկայացնում ենք բոլոր մարդկանց խղճմտանքին ...»*
Բ Կորնթացիներին 4:2

**2- Մերժված լինելու վախը ետ է պահում մեզ ճշտապահ լինելուց**

*«Վախը մարդուն որոգայթի մեջ կգցի, բայց Տիրոջն ապավինողը ապաստան կունենա:»* Առակներ 29:25

### Անկեղծության երկրորդ բանալին - Վստահել Աստծո սիրուն

*«Մի՛ վախեցիր, ո՛վ սիրելի մարդ, խաղաղությո՛ւն քեզ, զորացի՛ր, քաջասի՛րտ եղիր.»* Դանիել 10:19

*«Ես հույսս դրել եմ Աստծու վրա. չեմ վախենա. ի՞նչ կարող է անել ինձ մարդը:»* Սաղմոսներ 56:11

**3- Նորից ցավելու վախը ետ է պահում մեզ անկեղծ լինելուց**

*«Իմ սիրտը դառը ցավեց, և իմ հոգուց խոցվեցի.»*
Սաղմոսներ 73:21

*«Նա իր բոլոր օրերը խավարում կսպառի կսկիծով, հիվանդությամբ և բարկությամբ:»* Ժողովող 5:17

### Անկեղծության երրորդ բանալին - Թույլ տուր, որ Աստված քեզ նոր սիրտ տա

*«Ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ, ձեր մարմնից պիտի վերցնեմ քարե սիրտը ու ձեզ մարմնեղեն սիրտ տամ:»* Եզեկիել 36:26

*«Մի ժամանակ մենք էլ անմիտ էինք, ... ատելի էինք ու միմյանց ատող: Բայց երբ մեր Փրկիչ Աստծու քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց, նա ոչ թե ըստ մեր կատարած արդար գործերի մեզ փրկեց, այլ իր ողորմությամբ...»* Տիտոսին 3:3-5

Հաջորդ Քարոզի Թեման:

**ԿԵՐՏԵԼ ԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

**Հովիվ Սարօ Խաչիկեան**